

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը մանկապատանեկան ասմունքի հանրապետական փառատոնի մարզային փուլի հաղթողներին պատվոգրեր հանձնեց

2013 թվականի մայիսի 14-ին Եղեգնաձորի մշակույթի կենտրոնի համերգային դահլիճում անցկացվեց մանկապատանեկան ասմունքի 6-րդ փառատոնի Վայոց ձորի մարզային փուլը: Փառատոնը նվիրված է հայ մեծանուն բանաստեղծներ Համո Սահյանին և Պարույր Սևակին: Ամենամյա ասմունքի փառատոնը անցկացվում է ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի բարձր հովանո ներքո: Մարզային փուլի մասնակիցներին ողջունեց Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը:

Փառատոնի կազմկոնիտեին, մարզային փուլի ժյուրիի կազմին ներկայացրեց փառատոնի պատասխանատու քարտուղար Մարիետա Մակարյանը: Բանաստեղծներ Համո Սահյանի և Պարույր Սևակի մասին կենսագրական կարևոր տվյալներ ներկայացրեց բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Վարդանյանը:

Հանրապետական ասմունքի մանկապատանեկան փառատոնի ներդպրոցական փուլին մարզից մասնակցել է շուրջ 1500 դպրոցական, որից տարածքային փուլ են դուրս եկել 148-ը, որոնցից 48-ը մասնակցել են մարզայի փուլին:

Հանրապետական փուլի ուղեգիր նվաճելու համար յուրաքանչյուր դպրոցական Համո Սահյանի և Պարույր Սևակի բանաստեղծություններից ներկայացրել է մեկական ստեղծագործություն:

Հեղինակավոր ժյուրին, որի կազմում ընդգրկված են գիտնականներ, հանրաճանաչ արտիստներ ու ասմունքողներ, հաղթող է ճանաչել յուրաքանչյուր տարիքային խմբից 3 մասնակցի և 1 մասնակից ամենակրտսեր տարիքային խմբից:

11-14 տարիքային խմբում առաջին տեղը գրավել է Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի աշակերտ, 13 տարեկան Հրայր Ալոյանը, 2-րդ տեղը՝ Ջերմուկի թիվ 1 միջնակարգ դպրոցի աշակերտուհի, 12 տարեկան Մանե Խարատրյանը, երրորդ տեղը՝ նույն դպրոցի աշակերտ, 14 տարեկան Ռոբերտ Այվազյանը:

15-17 տարեկանների տարիքային խմբում առաջին տեղը գրավել է Աղավնաձորի միջնակարգ դպրոցի աշակերտուհի, 16 տարեկան Մերի Լևոնյանը, 2-րդ տեղը՝ Վայքի ավագ դպրոցի աշակերտուհի, 17 տարեկան Լիլիթ Գրիգորյանը, 3-րդ տեղը՝ Աղավնաձորի միջնակարգ դպրոցի աշակերտուհի, 15 տարեկան Մարիամ Մարգարյանը:

Ամենակրտսեր տարիքային խմբից հաղթող է ճանաչվել Վայքի հիմնական դպրոցի սան, 10 տարեկան Բենիկ Ասլանյանը:

Մարզային փուլի բոլոր մասնակիցներին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի անունից պատվոգրեր, իսկ հաղթողներին նաև նվերներ հանձնեցին մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը և մարզպետարանի աշխատակազմի

կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը:
Մրցանակային տեղեր գրաված 7 մասնակիցները կմասնակցեն ասմունքի
փառատոնի հանրապետական եզրափակիչ փուլին: